# Որակի կառավարման համակարգեր

(թեսթավորման հարցաշար)

| N | Հարցեր | Պատասխաններ |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 1. | Համաձայն ՀՍՏ ԻՍՕ 9000-2006 ստանդարտի ինչպե՞ս է սահմանվում որակը | 1. Որակը քաղաքակիրթ հասարակության մեջ ազգի զարգացման մակարդակը որոշող գործոն է<br>2. Որակը-օբյեկտի բնութագրերի այն ամբողջությունը, որը վերաբերում է դրա ունակություններին՝ բավարարելու սահմանված և ենթադրվող պահանջմունքները<br>3. Աստիճան, որով հատկանշական բնութագրերի ամբողջությունը բավարարում է պահանջները |
| 2. | Համաձայն ՀՍՏ ԻՍՕ 9000-2006 ստանդարտի ինչպե՞ս է սահմանվում որակի կառավարման համակարգ հասկացությունը | 1. Փոխկապակցված և փոխազդող տարրերի ամբողջության արդյունավետության կատարելագործում<br>2. Կառավարման համակարգ կազմակերպության ղեկավարման և վերահսկման համար, որը կիրառելի է որակի նկատմամբ<br>3. Համակարգ քաղաքականության և նպատակների մշակման և այդ նպատակներին հասնելու համար |
| 3. | Համաձայն ՀՍՏ ԻՍՕ 9000-2006 ստանդարտի քանի՞սն են որակի կառավարման համակարգի սկզբունքները | 1. վեց<br>2. ութ<br>3. ինը |
| 4. | Համաձայն ՀՍՏ ԻՍՕ 9000-2006 ստանդարտի, ո՞րն է հանդիսանում որակի կառավարման համակարգի սկզբունք | 1. Կողմնորոշում դեպի սպառողը<br>2. Սպառողների պահանջների վերլուծության ապահովում<br>3. Պատվիրատուների հետ պայմանագրային հարաբերությունների հաստատում |
| 5. | Համաձայն ՀՍՏ ԻՍՕ 9000-2006 ստանդարտի, ո՞րն է հանդիսանում որակի կառավարման համակարգի սկզբունք | 1. Աշխատողների խրախուսում<br>2. Աշխատողների պարտականությունների վերահսկում<br>3. Աշխատողների ներգրավում |
| 6. | Համաձայն ՀՍՏ ԻՍՕ 9000-2006 ստանդարտի, ո՞րն է հանդիսանում որակի կառավարման համակարգի սկզբունք | 1. Ընթացակարգային մոտեցում<br>2. Գործընթացային մոտեցում<br>3. Գործառույթային մոտեցում |
| 7. | Համաձայն ՀՍՏ ԻՍՕ 9000-2006 ստանդարտի, ո՞րն է հանդիսանում որակի կառավարման համակարգի սկզբունք | 1. Մշտական կատարելագործում<br>2. Տեխնոլոգիական փաստաթղթերի մշակում<br>3. Անընդհատ բարելավում |
| 8. | Համաձայն ՀՍՏ ԻՍՕ 9000-2006 ստանդարտի, ո՞րն է հանդիսանում որակի կառավարման համակարգի սկզբունք | 1. Փաստարկված որոշումների ընդունում<br>2. Տեղեկությունների հիման վրա որոշումների ընդունում<br>3. Տվյալների հիման վրա որոշումների ընդունում |
| 9. | Համաձայն ՀՍՏ ԻՍՕ 9000-2006 ստանդարտի, ո՞րն է հանդիսանում որակի կառավարման համակարգի սկզբունք | 1. Մատակարարների հետ վերլուծությունների կազմակերպում<br>2. Մատակարարների հետ փոխշահավետ հարաբերություններ<br>3. Մատակարարների պահանջների կարևորության սահմանում |
| 10. | Համաձայն ՀՍՏ ԻՍՕ 9001-2009 ստանդարտի որակի կառավարման համակարգի ստեղծման համար պահանջվում է | 1. Կազմակերպության ռազմավարական որոշում<br>2. Պատվիրատուների պահանջը<br>3. Աշխատակիցների ցանկությունը |
| 11. | ՀՍՏ ԻՍՕ 9001-2009 ստանդարտի մշակման ժամանակ ի՞նչն է հաշվի առնվել | 1. ՀՍՏ ԻՍՕ 9000 շարքի միջազգային ստանդարտների կիրառման նախկին փորձը<br>2. Որակի կառավարման սկզբունքները, որոնք սահմանված են ՀՍՏ ԻՍՕ 9000 և ՀՍՏ ԻՍՕ 9004 ստանդարտներով<br>3. ԻՍՕ կազմակերպության գլխավոր քարտուղարության հանձնարարականը |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| 12. | ՀՍՏ ԻՍՕ 9001-2009 ստանդարտով սահմանում են որակի կառավարման համակարգի նկատմամբ պահանջներ այն դեպքում, երբ կազմակերպությունը. | 1. Կարիք ունի ցուցադրելու սպառողների պահանջներին համապատասխանող արտադրանքի հետևողականորեն մատակարարելու իր ունակությունը<br>2. Կարիք ունի ցուցադրելու սպառողների պահանջներին և պարտադիր պահանջներին համապատասխանող արտադրանք հետևողականորեն մատակարարելու իր ունակությունը<br>3. Կարիք ունի ցուցադրելու պարտադիր պահանջներին համապատասխանող արտադրանք հետևողականորեն մատակարարելու իր ունակությունը |
| 13. | Համաձայն ՀՍՏ ԻՍՕ 9000-2006 ստանդարտի ինչպե՞ս է սահմանվում աուդիտ հասկացությունը | 1. Աուդիտի վկայությունների ստացման և դրանց օբյեկտիվ գնահատման համակարգված, անկախ և փաստաթղթերով հիմնավորված գործընթաց համաձայնեցված աուդիտի չափանիշների կատարման աստիճանի որոշման նպատակով<br>2. Կազմակերպության բարձրաստիճան ղեկավարության կողմից անցկացվող ստուգումներ, պարզաբանելու աշխատակիցների կողմից պարտականությունների և պատասխանատվության կատարման ունակությունների դրսևորման մակարդակը<br>3. Պատվիրատուների կողմից կազմակերպված ստուգումներ ի հայտ բերելու կազմակերպության ունակությունները ապահովելու սպառողների պահանջների կատարումը |
| 14. | Համաձայն ՀՍՏ ԻՍՕ 9000-2006 ստանդարտի, եթե որակի և շրջակա միջավայրի կառավարման համակար-գերը միասին են ենթարկվում աուդիտի, դա ինչպե՞ս է կոչվում | 1. Համատեղ աուդիտ<br>2. Համալիր աուդիտ<br>3. Կրկնակի աուդիտ |
| 15. | Համաձայն ՀՍՏ ԻՍՕ 9000-2006 ստանդարտի, եթե երկու կամ մի քանի կազմակերպություն համատեղ անց են կացնում ստուգվող կազմակերպության աուդիտ, դա ինչպե՞ս է կոչվում | 1. Համալիր աուդիտ<br>2. Բազմակողմանի աուդիտ<br>3. Համատեղ աուդիտ |
| 16. | Համաձայն ՀՍՏ ԻՍՕ 9000-2006 ստանդարտի, ո՞րն է հանդիսանում որակի կառավարման համակարգի սկզբունք | 1. Կառավարման նկատմամբ վերահսկողության հաստատում<br>2. Կառավարման համակարգված մոտեցում<br>3. Կառավարման արդյունավորության և արդյունավետության կարգավորում |
| 17. | ՀՍՏ ԻՍՕ 9004-2002 ստանդարտում նշված մեթոդական ցուցումները և հանձնարարականները նախատեսվա՞ծ է արդյոք օգտագործելու՝ | 1. Սերտիֆիկացման ժամանակ կամ պայմանագրերում ու կանոնակարգերում օգտագործելու համար<br>2. ՀՍՏ ԻՍՕ 9001-2002 ստանդարտի ներդրման ձեռնարկ օգտագործելու համար<br>3. Չի նախատեսված սերտիֆիկացման ժամանակ կամ պայմանագրերում ու կանոնակարգերում օգտագործելու, ինչպես նաև որպես ՀՍՏ ԻՍՕ 9001-2002 ստանդարտի ներդրման ձեռնարկ օգտագործելու համար |
| 18. | Համաձայն ՀՍՏ ԻՍՕ 9000-2006 ստանդարտի ինչպե՞ս է սահմանվում աուդիտի խումբը | 1. Մեկ կամ մի քանի աուդիտոր, որոնք անցկացնում են աուդիտ, անհրաժեշտության դեպքում ընդգրկելով նաև տեխնիկական փորձագետներ<br>2. Տեխնիկական և էկոնոմիկական աուդիտորներից կազմված խումբ<br>3. Տեխնիկական, էկոնոմիկական և սպասարկման ոլորտի աուդիտորների կազմված խումբ |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| 19. | ՀՍՏ ԻՍՕ 9001-2009 ստանդարտի պահանջները նախատեսված են կիրառելու՝ | 1. Միջին և խոշոր կազմակերպությունների համար, որոնք արտադրում են արդյունաբերական արտադրանքներ<br>2. Փոքր և միջին կազմակերպությունների համար, որոնք արտադրում են տնտեսական, սննդային և արդյունաբերական արտադրանք<br>3. Բոլոր կազմակերպությունների համար, անկախ տեսակից, չափից և մատակարարվող արտադրանքից |
| 20. | Համաձայն ՀՍՏ ԻՍՕ 9001-2009 ստանդարտի որակի կառավարման համակարգերի փաստաթղթերին ներկայացվող պահանջներն ընդգրկում են. | 1. Փաստաթղթերով ձևակերպած հայտարարություններ՝ որակի ձեռնարկի և որակի ապահովման մասին<br>2. Փաստաթղթերով ձևակերպված հայտարարություններ՝ որակի քաղաքականության և անձնակազմի իրազեկության մասին<br>3. Կազմակերպության արդյունավետ պլանավորման գործընթացների իրականացման և դրանց վերահսկման համար անհրաժեշտ փաստաթղթեր |
| 21. | Համաձայն ՀՍՏ ԻՍՕ 9001-2009 ստանդարտի բարձրաստիճան ղեկավարությունը պլանավորված պարբերականությամբ<br>վերլուծում է. | 1. Կազմակերպության որակի կառավարման համակարգը ` դրա մշտական պիտանությունը, համապատասխանությունը և արդյունավորությունն ապահովելու համար<br>2.Կազմակերպության որակի կառավարման համակարգը `դրա պիտանիությունը, արդյունավետությունը և արդյունավորութ-յունն ապահովելու համար<br>3.Կազմակերպության որակի կառավարման համակարգը՝ դրա մշտական պիտանիությունը,փոփոխությունների անհրաժեշտությունը և արդյունավետությունը ապահովելու համար |
| 22. | Նշվածներից ո՞ր դեպքում է, համաձայն ՀՍՏ ԻՍՕ 9001-2009 ստանդարտի, կազմակերպությունը պլանավորված ընդմիջումներով անցկացնում ներքին աուդիտ. | 1.Որոշելու համար, որ որակի կառավարման համակարգը, ներդրված է արդյունավետ, արդյունավոր և պահվում է աշխատանքային վիճակում<br>2. Երբ ՈԿՀ համապատասխանում է պլանավորված միջոցառումներին, ՀՍՏ ԻՍՕ 9001-2009 ստանդարտի պահանջներին, և կազմակերպության կողմից մշակված որակի կառավարման համակարգերի պահանջներին<br>3. Երբ ՈԿՀ համապատասխանում է պլանավորված միջոցառումներին, ՀՍՏ ԻՍՕ 9000-2006 ստանդարտի, աուդիտի պահանջներին և կազմակերպության կողմից մշակված որակի կառավարման համակարգի պահանջներին |
| 23. | Համաձայն ՀՍՏ ԻՍՕ 9001-2009 ստանդարտի կազմակերպությունը պետք է՝ | 1. Ձեռնարկի միջոցառումներ անհամապատասխանությունների վերացման ուղղությամբ՝ դրանց կրկնակի առաջացումը կանխելու նպատակով<br>2. Չձեռնարկի միջոցառումներ անհամապատասխանություն-ների պատճառների վերացման ուղղությամբ՝ դրանց կրկնակի առաջացումը կանխելու նպատակով<br>3. Ձեռնարկի միջոցառումներ անհամապատասխանություն-ների պատճառների վերացման ուղղությամբ՝ դրանց կրկնակի առաջացումը կանխելու նպատակով |
| 24. | Ի՞նչի համար է կազմակերպությունը ձեռնարկում կանխարգելիչ գործողություններ | 1. Ձեռնարկված կանխարգելիչ և ուղղիչ գործողությունների վերլուծության նպատակով<br>2. Անհամապատասխանությունների գնահատման և որոշման նպատակով<br>3. Հնարավոր անհամապատասխանությունների առաջացումը կանխելու համար |
| 25. | Սերտիֆիկացման մարմինը ի՞նչ ժամկետում է ըստ հայտի որոշում կայացնում. | 1. Տասնօրյա ժամկետում<br>2. Հինգ օրվա ընթացքում<br>3. Տասն օրվա ընթացքում |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| 26. | Սերտիֆիկացման մարմինը ե՞րբ կարող է կասեցնել սերտիֆիկատի գործողության ժամկետը | 1. Համապատասխանության հսկողության ժամանակ ոչ էական ռիսկերի հայտնաբերման դեպքում<br>2. Համապատասխանության հսկողության ժամանակ էական ռիսկերի բացահայտման ժամանակ<br>3. Համապատասխանության հսկողության ժամանակ էական ռիսկերի անհամապատասխանությունների հայտնաբերման ժամանակ |
| 27. | Կազմակերպությունը ե՞րբ չի կարող օգտագործել սերտիֆիկացված որակի կառավարման համակարգի համապատասխանության նշանը | 1. Գովազդային նպատակներով<br>2. Սերտիֆիկացումը հաստատելու համար<br>3. Արտադրանքի մակնշման, ինչպես նաև դրա սերտիֆիկացումը հաստատելու համար |
| 28. | Կազմակերպութունը նշվածներից ո՞ր դեպքում է չհամապատասխանող արտադրանքի հետ կապված հարցերը լուծում հետևյալ մեթոդներով. | 1. Երբ թույլատրի դրա օգտագործումը կամ ընդունումը, եթե համապատասխան լիազորված մարմինն ունի սպառողի կողմից զիջումներ<br>2. Երբ իրականացնում է գործողություններ` դրա նախնական ենթադրյալ օգտագործումը կամ կիրառումը կանխելու նպատակով<br>3. Երբ իրականացնում է գործողություններ` հայտնաբերված անհամապատասխանությունները վերացնելու և դրա ենթադրող կիրառումը կանխելու նպատակով |
| 29. | Ո՞վ է ստուգում անհամապատասխանու-թյունների վերացումը | 1. Սերտիֆիկացման մարմնի աուդիտորների խումբը<br>2. Կազմակերպության ներքին աուդիտի խումբը<br>3. Սերտիֆիկացման մարմնի որակի տեսուչները |
| 30. | Համաձայն ՀՍՏ ԻՍՕ 19011-2005 ստանդարտի աուդիտի ծրագրի ծավալի վրա ազդում են. | 1. Աուդիտի ենթարկվող կազմակերպության չափը, գործունեության տեսակը, կառուցվածքի բարդությունը, յուրաքաչյուր իրականացվող աուդիտի ոլորտը, կարևորությունը<br>2. Աուդիտ անցկացնող կազմակերպության չափը, գործունեութ-յան ոլորտը, կառուցվածքի բարդությունը, յուրաքաչյուր իրականացվող աուդիտի տեսակը, կարևորությունը<br>3. Աուդիտի ծրագրի ծավալի վրա ոչինչ չի կարող ազդեցություն ունենալ |
| 31. | Համաձայն ՀՍՏ ԻՍՕ 19011-2005 ստանդարտի աուդիտի ծրագրի վերաբերյալ գրառումները ներառում են. | 1. Աուդիտի ենթարկվող կազմակերպության անձնակազմի մասին գրառումները<br>2. Տարբեր աուդիտների հետ կապված գրառումները,աուդիտի ծրագրի վերլուծության արդյունքները, աուդիտում ներգրավվող անձնակազմի մասին գրառումները<br>3. Աուդիտի արդյունքները, աուդիտի ենթարկվող կազմակերպության անձնակազմի մասին գրառումները |
| 32. | Համաձայն ՀՍՏ ԻՍՕ 19011-2005 ստանդարտի համատեղ աուդիտ անցկացնելու դեպքում մինչև աուդիտի սկսելը կարևոր է. | 1. Հասնել համաձայնության աուդիտի խմբի ղեկավարի պարտականությունների վերաբերյալ<br>2. Հասնել համաձայնության յուրաքանչյուր կազմակերպության պարտականությունների և հատկապես աուդիտի խմբի ղեկավարի վերաբերյալ<br>3. Ստուգվող կազմակերպությունների միջև հասնել համաձայնության յուրաքանչյուր կազմակերպության պարտականությունների և հատկապես աուդիտի խմբի ղեկավարի լիազորությունների վերաբերյալ |
| 33. | Համաձայն ՀՍՏ ԻՍՕ 19011-2005 ստանդարտի յուրաքանչյուր աուդիտի համար աուդիտի ծրագրի շրջանակ-ներում ի՞նչ է անհրաժեշտ սահմանել | 1. Աուդիտի նպատակները, ոլորտը և չափանիշները<br>2. Աուդիտի խմբի ղեկավարի լիազորությունները<br>3. Աուդիտի խմբի անդամների պարտականությունները |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| 34. | Համաձայն ՀՍՏ ԻՍՕ 19011-2005 ստանդարտի աուդիտ անցկացնելու հնարավորության մասին որոշում ընդունելուց հետո անհրաժեշտ է. | 1. Հաշվի առնել ժամանակի և աուդիտ անցկացնելու ռեսուրսների առկայությունը<br>2. Կազմավորել աուդիտի խումբ` հաշվի առնելով աուդիտի նպատակներին հասնելու համար անհրաժեշտ իրազեկությունը<br>3. Հաշվի առնել աուդիտը պլանավորելու համար անհրաժեշտ տեղեկատվության բավարարությունը և առկայությունը |
| 35. | Համաձայն ՀՍՏ ԻՍՕ 19011-2005 ստանդարտի աուդիտորների անձնական արժանիքները պետք է. | 1. Թույլ տան նրան գործել աուդիտի անկացման սկզբունքներին համապատասխան<br>2. Թույլ տան նրան լինել անկողմնակալ<br>3. Թույլ տան նրան լինել օրինավոր |
| 36. | Համաձայն ՀՍՏ ԻՍՕ 19011-2005 ստանդարտի աուդիտորը պետք է լինի. | 1. Ազնիվ, անկեղծ, շրջահայաց<br>2. Ինքնուրույն<br>3.Օրինավոր, բաց, դիվանագետ, դիտունակ, խորաթափանց, բազմակողմանի, համառ, վճռական և ինքնուրույն |
| 37. | Համաձայն ՀՍՏ ԻՍՕ 19011-2005 ստանդարտի ո՞ր ոլորտներում որակի կառավարման և էկոլոգիական կառավարման համակարգերի աուդիտորները պետք է ունենան գիտելիքներ | 1. Աուդիտի սկզբունքների, ընթացակարգերի և մեթոդների<br>2.Կառավարման համակարգերի և վկայակոչված փաստաթղթերի; կազմակերպման ոլորտում; կիրառվող օրենքների, տեխնիկական կանոնակարգերի և առարկային վերաբերող այլ պահանջների<br>3.1-ին և 2-րդ կետերում նշված ոլորտներում |
| 38. | Համաձայն ՀՍՏ ԻՍՕ 19011-2005 ստանդարտի աուդիտը արդյունավոր և արդյունավետ անցկացնելու համար աուդիտի խմբի ղեկավարները պետք է. | 1.Ունենան աուդիտը ղեկավարելու լրացուցիչ գիտելիքներ և հմտություններ<br>2. Ունենան ղեկավարման փորձ<br>3.Ունենան համապատասխան կրթություն |
| 39. | Համաձայն ՀՍՏ ԻՍՕ 19011-2005 ստանդարտի ո՞ր ոլորտներում որակի կառավարման համակարգերի աուդիտորները պետք է ունենան գիտելիքներ | 1. Արտադրության մեթոդների և տեխնոլոգիաների; գործընթացների և տեխնոլոգիաների, ներառյալ ծառայությունների<br>2. Անցկացվող աուդիտի տեխնոլոգիական առանձնահատկությունների<br>3. Որակին վերաբերող մեթոդների և տեխնոլոգիաների; գործընթացների և տեխնոլոգիաների, ներառյալ ծառայությունների |
| 40. | Համաձայն ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17021-2006 ստանդարտի ո՞վ է կրում սերտիֆիկաց-ման պահանջներին համապատասխա-նության ապահովման պատասխանա-տվությունը | 1. Պատվիրատու կազմակերպությունը<br>2. Սերտիֆիկացման մարմինը<br>3. Պատվիրատու կազմակերպությունն, այլ ոչ թե սերտիֆիկացման մարմինը |
| 41. | Համաձայն ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17021-2006 ստանդարտի ստուգման առաջարկու-թյունների հիման վրա սերտիֆիկացման մարմինը. | 1.Որոշում է կայացնում սերտիֆիկացում տրամադրելու /եթե համապատասխանությունը հաստատվում է բավարար քանակությամբ փաստերով/ կամ դրանում մերժելու մասին /եթե առկա չեն համապատասխանությունը հավաստող բավարար քանակությամբ փաստեր/<br>2.Որոշում է կայացնում սերտիֆիկացում չտրամադրելու /եթե համապատասխանությունը հաստատվում է բավարար քանակությամբ փաստերով/ կամ դրանում չմերժելու մասին /եթե առկա չեն համապատասխանությունը հավաստող բավարար քանակությամբ փաստեր/<br>3.Որոշում չի կայացնում սերտիֆիկացում տրամադրելու կամ դրանում մերժելու մասին |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| 42. | Համաձայն ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17021-2006 ստանդարտի սերտիֆիկացման պահանջներին համապատասխանու-թյան ճշգրիտ գնահատման համար սերտիֆիկացման մարմնին պահանջվող տեղեկություններին արտոնյալ մուտքի իրավունք ունենալու համար, սերտիֆիկացման մարմինը. | 1. Պետք է ապահովի կազմակերպության կառավարման համակարգին վերաբերող առևտրային և կոմերցիոն տեղեկությունների գաղտնիությունը<br>2.Պետք է ապահովի կազմակերպության կառավարման համակարգին վերաբերող ցանկացած տեղեկությունների գաղտնիությունը<br>3.Պետք է ապահովի առևտրային և կոմերցիոն տեղեկությունների գաղտնիությունը |
| 43. | Համաձայն ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17021-2006 ստանդարտի սերտիֆիկացման մարմինը պարտավոր է. | 1. Մշտապես վարել սերտիֆիկացման գործողությունների մեջ ներգրավված անձին առնչվող փաստաթղթեր<br>2. Մշտապես վարել սերտիֆիկացման գործողությունների մեջ չներգրավված անձանց մասնագիտական մակարդակին, ստացած ուսմանը, աշխատանքային փորձին, անդամակցությանը, մասնագիտական կարգավիճակին և իրազեկությանն առնչվող փաստաթղթեր<br>3. Մշտապես վարել սերտիֆիկացման գործողությունների մեջ ներգրավված անձի մասնագիտական մակարդակին, ստացած ուսմանը, աշխատանքային փորձին, անդամակցությանը, մասնագիտական կարգավիճակին և իրազեկությանն առնչվող փաստաթղթեր |
| 44. | Համաձայն ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17021-2006 ստանդարտի սերտիֆիկացման փաստաթղթի վրա նշված ուժի մեջ մտնելու օրը. | 1. Չպետք է լինի ավելի վաղ, քան կայացվել է սերտիֆիկացման մասին որոշումը<br>2. Պետք է լինի ավելի վաղ, քան կայացվել է սերտիֆիկացման մասին որոշումը<br>3. Պետք է լինի սերտիֆիկացման մասին որոշման կայացման օրը |
| 45. | Համաձայն ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17021-2006 ստանդարտի սերտիֆիկացման մարմինը պետք է սահմանի իր կողմից պատվիրատուների օգտագործման համար տրվող նշանի տրամադրման և օգտագործման կարգը: Նշանը. | 1.Չպետք է օգտագործվի ապրանքի կամ ապրանքի փաթեթավորման վրա` սպառողի համար տեսանելի տեղում, կամ որևէ այլ եղանակով, որը չի կարող մեկնաբանվել որպես ապրանքի համապատասխանության նշան<br>2.Պետք է օգտագործվի ապրանքի կամ ապրանքի փաթեթավորման վրա` սպառողի համար տեսանելի տեղում, կամ որևէ այլ եղանակով, որը կարող է մեկնաբանվել որպես ապրանքի համապատասխանության նշան<br>3.Չպետք է օգտագործվի ապրանքի կամ ապրանքի փաթեթավորման վրա` սպառողի համար տեսանելի տեղում, կամ որևէ այլ եղանակով, որը կարող է մեկնաբանվել որպես ապրանքի համապատասխանության նշան |
| 46. | Համաձայն ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17021-2006 ստանդարտի սերտիֆիկացման մարմինը. | 1.Չպետք է թույլ տա իր նշանի օգտագործումը լաբորատոր փորձարկումների, ստուգաճշտման կամ զննման հաշվետվու-թյուններում, քանի դեռ վերջիններս տվյալ համատեքստում համարվում են ապրանքներ<br>2. Պետք է թույլ տա իր նշանի օգտագործումը լաբորատոր փորձարկումների, ստուգաճշտման կամ զննման հաշվետվու-թյուններում, քանի դեռ վերջիններս տվյալ համատեքստում համարվում են ապրանքներ<br>3. Պետք է թույլ տա իր նշանի օգտագործումը լաբորատոր փորձարկումների, ստուգաճշտման կամ զննման հաշվետվու-թյուններում, քանի դեռ վերջիններս տվյալ համատեքստում չեն համարվում ապրանքներ |

| 1 | 2 | 3 |
| --- | --- | --- |
| 47. | Համաձայն ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17021-2006 ստանդարտի սերտիֆիկացման մարմինը. | 1. Պարտավոր չէ պատվիրատուին նախապես տեղյակ պահել այն տեղեկատվության մասին, որը նա պատրաստվում է հրապարակել<br>2.Պարտավոր է պատվիրատուին նախապես տեղյակ պահել այն տեղեկատվության մասին, որը նա պատրաստվում է հրապարակել<br>3.Պարտավոր է պատվիրատուին նախապես տեղյակ պահել այն տեղեկատվության մասին, որը նա չի պատրաստվում հրապարակել |
| 48. | Համաձայն ՀՍՏ ԻՍՕ 9001-2009 ստանդարտի, եթե կազմակերպությունը որոշում է արտաքին կազմակերպություն-ներին փոխանցել որևէ գործընթացի կատարում, որը կարող է ազդել սահման-ված պահանջներին արտադրանքի համապատասխանության վրա, ապա այդ գործընթացների հսկողության տեսակն ու աստիճանը ինչ՞ով պետք է սահմանված լինի | 1.Օրենսդրությամբ և տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջներով<br>2.Որակի կառավարման համակարգով<br>3.Սպառողների կողմից չնշված, բայց օգտագործման համար անհրաժեշտ կոնկրետ կամ ենթադրվող պահանջներով |
| 49. | Համաձայն ՀՍՏ ԻՍՕ 9001-2009 ստանդարտի, եթե կազմակերպությունը կամ սպառողը նախատեսում է համադրումն իրականացնել մատակա-րարի մոտ, ապա կազմակերպությունը. | 1.Պետք է գնումների մասին տեղեկատվության մեջ սահմանի համադրման ենթադրվող միջոցները և արտադրանքի թողարկման մեթոդը<br>2.Պարտավոր չէ գնումների մասին տեղեկատվության մեջ սահմանի համադրման ենթադրվող միջոցները և արտադրանքի թողարկման մեթոդը<br>3.Պետք է գնումների մասին տեղեկատվության մեջ սահմանի համադրման ենթադրվող միջոցները կամ արտադրանքի թողարկման մեթոդը |
| 50. | Ի՞նչ տվյալներ պետք է ներառի որակի ձեռնարկը | 1. Որակի կառավարման համակարգի կիրառման ոլորտը, ՈԿՀ համար մշակված փաստաթղթավորված ընթացակարգերը կամ դրանց վկայակոչումները<br>2. Որակի կառավարման համակարգի կիրառման ոլորտը, էկոլոգիական քաղաքականությունը<br>3.Որակի կառավարման համակարգերի համար մշակված փաստաթղթավորված ընթացակարգերը կամ դրանց վկայակոչումները, բնապահպանական թույլտվությունները |